

Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 15-ին՝ Ս. Աստվածածնի Վերափոխման փոնի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մաքուրովեց հանդիսավոր Ս. Պարարագ: Պարարագիչն էր Արարարյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոնյանը:

Հընթաց սրբազան արարողության Սրբազան Հայրը հավուր պարշաճի քարոզ խոսեց (տես էջ 40):

Հավարդ Ս. Պարարագի եկեղեցականաց թափորը շարժվեց դեպի Ս. Տրդատի բաց խորան, ուր և ձեռամբ Գարեգին Բ Կաթողիկոսի կարարովեց խաղողօրինեքի արարողությունը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատրնի մասնակիցները և բազմաթիվ հավարացյալներ:

ՀՈԳԵՆԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՆՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կարարովեց հոգեհանգիստ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազեն Ա Կաթողիկոսի մահվան 10-րդ փարելիցի առիթով:

Տ. Ներսես արքեպս. Պոզապայանն իր խոսքում անդրադարձավ Վազեն Ա Հայրապետի անցած հոգևոր արդյունաշար ուղուն՝ խոսելով Հայոց Հայրապետի շինարարական գործունեության, հոգևորականների պարասության և Մայր Աթոռի պայծառացմանն ուղղված ջանքերի մասին:

Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունը և մի խումբ ռումինահայեր:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ